

են քեզ մեղադրողները. ոչ ոք քեզ չդատապարտեց». «Ոչ ոք, Տէր». պատասխանեց կինը. «Ե՛ս ևս չեմ դատապարտում. դնա և այլևս մի մեղանչիր»:

Մամբրէ վարդապետ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ

ՌՈՒՍԸՅ ԵԿԵՂԵՅԻ

«Արարատի» ընթերցողներին յայտնի է թէ ինչպէս Ռուսաց ս. Սինօդի կողմից պաշտօնապէս սուրբ ճանաչուեց Սարովի վանքի արեղայ ծեր հայր Սերաֆիմը. այժմ նոյն եկեղեցու բերան Перк. Вѣст. շաբաթաթերթը հրատարակել է նոյն հայր Սերաֆիմի մատուցած ստուգութեան համար կազմուած յանձնաժողովի արձանագրութիւնը պետական կարգադրութիւնների և տնօրինութիւնների բաժնում հետեւեալ ձևով.

Արձանագրութիւն ծեր հայր Սերաֆիմ Սարովացու մատուցածները ստուգելու յանձնաժողովի.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի ծննդեան 1903 թուին, յունուարի 11-ին, Մոսկուայի և Կոյովնի մետրոպոլիտ Վլադիմիրը, Տամբով և Շադի եպիսկոպոս Դիմիտրին, Նիժեգորոտի և Արզումանի եպիսկ. Նազարին, Սուզդուլի վարդապետ Սերաֆիմը, Վիշնի վարդապետ Արկադին, Սարովի վանահայր Երօքէյը, Սարովի դանձապահ Կլիմենտ արեղան, Տամբովի մայր եկեղեցու փակահալ Տիխօն քահանան և Մոսկուայի ս. Սինօդի պրօկուրոր Ալէկսէյ Շիրենսկիյ - Շիմասովը ձեռնարկեցին կատարել կառավարիչ ս. Սինօդի առաջադրութիւնը, որ վերաբերում էր Սարովեան վանքի արեղայ երջանկայիշատակ ծերունի հայր Սերաֆիմի սուրբ մատուցածների ստուգութեան: Նախ պատարագ մատուցուեց, ապա Դիմիտրի եպս. ղ. Սերաֆիմի գերեզմանի վրայ հոգեհանգիստ

կատարեց, որից յետոյ յանձնաժողովի անդամները մտան հ. Սերաֆիմի գերեզմանի վերայ կառուցուած մատուռը: Մատուռի մէջ շինուած է չուգունից դամբարանի յուշարձանը շերիմի ձեռով՝ տրուած չուգունէ պատուանդանի վերայ, իսկ պատուանդանն էլ ամբարցրած կոփածոյ քարեայ սիւների վրայ:

Այս յուշարձանով ճիշտ կերպով որոշուած է երանելի հայր Սերաֆիմի հանգչելու վայրը: Յուշարձանի վրայ գրուած է. «Այս դամբարանի տակ թաղուած է Աստուծոյ ծառայ հանգուցեալ Սերաֆիմ արեղայի մարմինը, որ մեռաւ 1833 թ. յունուարի 2-ին: Նա մտաւ Սարովի այս անապատը 17 տարեկան հասակում և մեռաւ 73 տարեկան: Նա իր ամբողջ կեանքը նուիրեց Աստուծոյ փառքին և ուղղափառ քրիստոնեաների հոգու շինութեան (НИЗИДАНІЕ), որոց սրտում և ապրում է մինչև այժմ հ. Սերաֆիմը»: Դամբարանի զլխի կողմում շինուած է բրոնզեայ ուռուցիկ նկարը, որ ցոյց է տալիս հ. Սերաֆիմի երանական վախճանը: Յուշարձանի հարաւային կողմից ցածում, յատակից 2¹/₂ վերշոյ ըարձրութեամբ դանուում է մի կլոր անցք, որից հող էին վերցնում: Սրբ. Վլադիմիրի կարգադրութեամբ կէսօրին մի քանի մարդոց օգնութեամբ հ. Սերաֆիմի դամբարանի յուշարձանը պատուանդանի հետ միասին վերցրին և փոխադրեցին հ. Սերաֆիմի խուցի վրայ շինուած մատուռը:

Յուշարձանի տանելուց յետոյ, փակեցին մուտքի դուռը ներսից և մի քանի մշակներ վերցրին պատուանդանի տակի քարեայ սիւները և գերեզմանի հողը մի արշին խորութեամբ, ուր երևաց հ. Ս. ի դագաղի վրայ կապած կամարը, որը մի քառարշին տեղ քանդուել էր: Այդ քանդուած անցքը բաց անել էր տուել սրբ. Դիմիտրին 1902 թ. օգոստոսին, հ. Ս. ի դագաղը և մասունքները նախօրօք ստուգելու համար, համաձայն ս. Սինօզի առանձին — յանձնարարական առաջարկութեան: Ապա քանդեցին շերիմի ամբողջ կամարը: Դամբարանի ներսում յանձնաժողովի անդամները տեսան կապուց շինած միակտոր — դագաղը: Բայց որովհետև 1 ար. 14 վերշ. խորութեան վերայ դժուար էր մանրամասն զննել սուրբի մասունքները, ուստի դագաղը չուաններով հանեցին և դրեցին գերեզմանի հիւսիսային կողմը, նախօրօք պատրաստուած մի սեղանի վրայ: Ապա ներկայ եղողները սկսեցին զննել միակտոր — դագաղը, որը ունէր զլխի կողմում 2 արշին. 12¹/₂ վերշ., իսկ ոտքերի կողմում 2 արշ. 10³/₈ վերշ. գիրկ — լայնութիւն. երկարութիւնը 3 արշ. 4¹/₂ վերշ., իսկ գոյնը — գրեթէ սև: Դագաղի յատակը ոտքերի մօտ, աջ կողմից և կախարելի վերին մասը մի քիչ փակ էր, իսկ քննութեան

ժամանակ դրսի կողմից առհասարակ, դադարի փայտը երևաց փափուկ և խոնավ. սակայն ընդհանրապէս ամուր: Կափարիչը վերցնելիս դադարի ներքի պատերը երևացին խոնավ, երեք տեղ նկատելի եղաւ բորբոս, որից սակայն ոչ մի հոտ չէր գալիս: Դադարի մէջ ներկայ եղողները տեսան հանգուցեալի պարզ գին, ծածկուած փթած պարեգօտով: Երջանկայիշատակ հ. Աւարաֆիմի մարմինը սկսել էր փտել: Նրա ոսկորները, որ լաւ էին մնացել, բոլորը լրիւ իրենց տեղումն էին, բայց հեշտութեամբ էին իրարից զատուում: Մօրուսի և գլխի մազերը սպիտակ—դեղնաւուն էին, թէև իրենց տեղերից պոկուած, բայց մնացել էին: Երջանկայիշատակ հ. Ս.-ի բարձր լցուած էր ծառի թել—թել արած կեղևով: Ոտքերին ունէր սեփական հողաթափերը. Ձեռքերի տակ գտնուեցաւ պղնձից ձուլած խաչ 3 վերջ, մեծութեամբ: Ստուգութեան ժամանակ երևաց որ ի Տէր հանգուցեալ Ս.-ի մասունքները ծածկուած էին զոյնզոյն խառ կտորով. իսկ միակտոր—դադարը գլխի և ոտքի կողմից հասարակ պարանով կապած, որի ծայրերը կնքած էին մի առանձին տախտակի վերայ սրբ. Վլադիմիրի անձնական կնիքներով: Այս բոլորից յետոյ դադարը դրուեցաւ դամբարանի մէջ, ծածկուեցաւ զկպսկէ ծածկոցով. դամբարանն էլ փակուեցաւ փայտեայ կափարիչով, որի վրայից ձգուեցաւ զորգ և տնկուեցաւ մի սիւն, փաթաթած խառ կտորով որի վրայից կախուեցաւ ս. Ստուածամօր պատկերը որ յայտնի է «Գթութիւն» անունով: Ապա կախուեցաւ վրայից կանթեղ: Ստուգութիւն կատարողները հեռացան մատուռից երեկոցեան ժամի 6-ին:

Իսկական արձանագրութեան վրայ օտարագրել են իրենց տիրազոյններով արձանագրութեան գլխին յիշուած յանձնաժողովի բոլոր անդամները:

Երևանի քաղաքի պատկերասրահի—բուրքի Կ. Պօլսի բնդհանրական պատկերասրահին:

Կ. Պօլսի սրբ. արքեպիսկոպոս և ընդհանրական պատրիարք Տ. Տ. Յովակիմ Գ.-ին և Կ. Պօլսի սրբ. Սինօդին և ս. եկեղեցուն եղբայրական համբոյր ի Քրիստոս:

Համայն Ռուսիոյ սրբ. Սինօդը առանձին ուղարկութեամբ ստացաւ Ձեռք սրբութեան թուղթը, որով կոչ էր անում ի թիւս այլոց և Ռուսաց եկեղեցուն միջոցներ մտածել ընդհանրական եկեղեցու պայծառութեան համար: Այդ առաջարկը շատ մօ-

տիկ է ուղղափառ եկեղեցու սրտին, որովհետեւ միայն միութեան և ընդհանրութեան փոխադարձ սիրոյ մէջ կարելի է դըտնել քրիստոնէական եկեղեցու ոյժը և հիմքը խաւարի և չարի դէմ կռուելու գործում: Այդպիսի մի գեղեցիկ ոյժ և հիմունք ստեղծել կարող է միայն այժմ եղած բոլոր եկեղեցիների պետերից և կառավարիչներից կազմուած ու Հայրերի ընդհանուր ժողովը, որը երես առ երես լսելով ու իմանալով իրենց եկեղեցիների կարիքներն ու ցաւերը, ընդհանուր ուժով դէմ կզնէին եկեղեցու յառաջադիմութեանը խանդարող արգելքներին և այդպիսով իրենց քրիստոնէայ հաւատացեալների սրտում միշտ վառ կպահէին ճշմարիտ քրիստոնէութեան սրբազան հաւատը: Սակայն ցաւ ի սիրտ պէտք է նկատել որ այժմեան քաղաքական հանգամանքները այնպէս են շաղկապուած եկեղեցական կեանքի հետ, որ մէկի շարժուելով, շարժուում է միւսը. մի պետութեան մէջ գտնուած եկեղեցին երբ գործ պիտի ունենայ մի այլ տէրութեան ներքոյ գտնուած եկեղեցու հետ, անհրաժեշտաբար իրար հետ գործ են ունենում և այդ եկեղեցիների պաշտպան համապատասխան պետութիւնները. այնպէս որ այժմեան հանգամանքներում ընդհ. քր. եկեղեցու պետերի մի համախմբումը և համաքրիստոնէական ու համաեկեղեցական խնդիրներով զբաղուելը շատ դժուար իրականացող մի խնդիր է: Մենք միայն կարող ենք այդ բանի համար ցանկանալ, աղօթել և յուսալ: Մեր ուղղափառ տեղական եկեղեցիները ձեռնարկում են այժմ ըստ կարելիութեան մօտենալ իդեալ նախնական — եկեղեցու վիճակին, պահելով իր անդամների և եղբայրակիցների մէջ կենդանի յարաբերութիւն թէ անձամբ և թէ թղթերով, որով հեշտութեամբ կտեղեկանան միմեանց եղբայրական խորհուրդներին և եկեղեցու անձնական փորձերին եկեղեցին կառավարելու գործում: Սակայն իւր առանձնակի վարած կեանքում ամէն մի ուղղափառ եկեղեցի պէտք է պահպանի իւր միւս քոյր եկեղեցիների հետ մի լինելու գիտակցութիւնը: Այս քանը կամաց կամաց կնպաստէ ուղղափառ բոլոր եկեղեցիների մի սիրտ և մի հոգի լինելուն, որի մէջ աչքի ընկնող գերը պիտի խաղան այդ եկեղեցիների իմաստուն կառավարիչները և պետերը:

Ինչ վերաբերում է մեր յարաբերութեան դէպի լատին — բողոքական քրիստոնէաները, ուրս ուղղափառ եկեղեցին միւս ուղղափառ եկեղեցիների հետ աղօթում և ոպասում է, որ այս երբեմն մայր — եկեղեցիները զղջան և «ի գիտութիւն ճշմարտութեան» գան: Մենք յարգում ենք լատին նուիրապետու-

Թեան առաքելական առաջնութիւնը և այդ եկեղեցու կղերն ընդունում ենք իրենց համապատասխան աստիճանով (ինչպէս և ընդունում ենք հայերին, կողտերին, նետորականներին ևւն)։ Մենք պատրաստ ենք ամեն ինչ զոհել զոցա հետ այս երկրի վրայ մը միութիւն հաստատելուն։ Բայց, ցաւօք պիտի ասել, որ մենք առ այժմ թողած այդ միտքը, ստիպուած ենք մաքառել լատին բողոքական եկեղեցու այն ոտնձգութեանց դէմ, որ լինում են մեր եկեղեցու որդիներին որսալու նպատակով։ Անտարբեր լինել դէպի այդ հանգամանքը մենք չենք կարող։

Իր պատասխանի շարունակութեան մէջ սրբ. Սինօզը նոյն կերպ մանրամասն քննութեան ենթարկելով Ռուս—ուղղափառ եկեղեցու յարաբերութիւնը բողոքական, անգլիական և այսպէս կոչուած՝ հին—կաթողիկէ եկեղեցիներին հետ, նոյնպէս գտնում է որ ցանկալի ընդհանրական եկեղեցու միութիւնը գլուխ կգայ միայն այն ժամանակ, երբ յիշեալ եկեղեցիները մեղմեն իրենց ոչ—այնքան բարեկամական յարաբերութիւնները Ռուս—ուղղափառ եկեղեցու հետ և միջոց տան իրեն տեղական ուղղափառ եկեղեցու ներքին կեանքը բարեկարգ և փայլուն վիճակի մէջ դնելուց յետոյ ընդհանուր եկեղեցու հետ մի ընդհանրական միութիւն կազմելու խնդրի վրայ մտածել։ Աւելի առաջ գալով Ռուս—ուղղ. եկեղեցին գտնում է որ ընդհանրական պատրիարքի առաջարկը—այժմեան Յուլեան տօմարի փոխարէն Գրիգորեանը ընդունել կամ Յուլիականի մէջ մի քանի փոփոխութիւն մտցնել—այնքան էլ հեշտութեամբ չի կատարուի և բաւական էլ միջոց է հարկաւոր։ Այդ առթիւ Թագաւոր Կայսեր առանձին ուշադրութեամբ Պետերբուրգի Գիտութեանց ճեմարանում կազմուած է մի յատուկ յանձնաժողով, որը պիտի զբաղուի այդ խնդրով։ Սակայն յանձնաժողովի պարապմունքները այնքան բարդ են և շատ, որ մինչև այժմ դեռ չեն աւարտուած։ Միւս կողմից կառ. ս. Սինօզը գիտել է տալիս այն հանգամանքը, որ չնայած Յուլեան տօմարի Գրիգորեանով փոխարինելու ջերմ ցանկութեան, այնուամենայնիւ դժուարանում է այդ խնդրի իրագործումը մէկ այն պատճառով, որ եկեղեցական մի շարք խնդիրներ խառնուում են իրար և մէկ էլ՝ որ քիչ շատ հեղինակաւոր գիտնականները, որոնք Ռուս—ուղղ. եկեղեցու բարօրութիւնն են ցանկանում կարեւոր են համարում Յուլիականի մէջ մի քանի փոփոխութիւններ միայն՝ Գրիգորեանին նկատմամբ։ Անաես առնել այս հանգամանքները անկարելի է, եթէ Ռուս. ուղղ. եկեղեցու ներքին խաղաղ կեանքը վրդովելու առանձին ցանկութիւն չկայ։ Աւստի և Ռուս. եկեղեցին իր կողմից աւելի

համամիտ է Յուլեան ասմարով իր կեանքը շարունակելու խնդրին:

Ներկայացնելով վերը յիշուած բոլոր խնդիրները ընդհանրական ուղղ. եկեղեցու պատրիարքի սրբ. ուշադրութեան Ռուս. եկեղ. կառավարչական ս. Սինոդը ցաւօր յայտնում է որ հենց իրեն Ռուս. ուղղ. եկեղեցու մէջ պակաս չեն այնպիսի խնդիրներ, որոնք առանձին մտահոգութիւն են պատճառում այդ եկեղեցու կառավարիչներին: Մատնացոյց անելով այն հանգամանքը, որ Ռուս. ուղղ. եկեղեցու կողքին ապրում են նեոտորական, հայ, խալտի և մի շարք այլ եկեղեցիներ, որոնք շատ դժբերով բաժանուելով մայր—եկեղեցուց չեն կորցրել ներկայումս իրենց առանձին նուիրապետութիւնը և եկեղեցական կազմակերպութիւնը,—Ռուս եկեղեցին յայտնում է որ յիշեալ եկեղեցիներին իսկական մայր եկեղեցու փարախը բերելու և ուղղ. եկեղեցու հետ ձուլելու խնդիրը իր համար առաջնակարգ կարևոր խնդիրներէց մէկն է և որ եթէ կարողանայ ի կատար ածել այդ սրբազան գործը, մեծ գոհունակութեամբ իր պարտը կատարած կհամարի Ռուս. ուղղ. եկեղեցին, որովհետեւ ոչ միայն յիշեալ նեոտորական, հայ, խալտական ևլն եկեղեցիներին նոր եկեղեցական կեանքով վերածնուելու գործին նպաստած կլինի, այլ և բաւական չափով ընդհանրական եկեղեցու միութեան գործը առաջ տարած կլինի:

Ապա քրիստոնէական ողջունելւ փակելով թուղթը, որ գրուած է 1903 թ. փետր. 25-ին, կառ. ս. Սինոդի կողմից ստորագրել են՝ Պետերբուրգի և Նաղոսի մետրօպօլիտ Անտօնին, Մոսկուայի և Կօլումբենի մետր. վլադիմիրը, վլադիկաւկազի և Մոզդոկի մետր. վլադիմիրը, Տաւրիկեան և Սիմֆերօպօլի մետր. Նիկոլան. Սարատովի Յարիցինի եպ. Իօաննը և Մարկէլլ եպիսկոպոսը:

— Այս տարի Կիևի հոգևոր ճեմարանը աւարտող ուսանողներէց 38 հոգի արժանացան աստուածաբանութեան կանդիտատի աստիճանին. դրանց 16 հոգի արտօնութիւն ստացան ձեռք բերել աստուածաբանութեան մագիստրոսի աստիճան, առանց որ և է նոր բանաւոր քննութեան: Աւարտողներից երկու հոգի մնացին ճեմարանում պրօֆեսօրական թոշակով, իսկ երկուսը՝ ընդունելով քահանայութեան աստիճան՝ տեղ դասն Կիևի թեմում:

— Ռուսաց հոգևոր—կրթական հաստատութիւններն ևս բմբռնելով աշակերտական ամառնային դրօսանքների օգուտը այս վերջին մի քանի տարում առանձին ուժով աշխատում են դարկ տալ այդ գործին, որովհետեւ առաջօր տեսնում են թէ

ինչպէս «անմիջապէս և մօտիկ կերպով կարելի է լինում ծանօթանալ հայրենի հնութիւններին, տեղերին, սրբ. վայրերին և ին, որոնք միանգամայն կրթում են աշակերտներին հայրենասիրական և ճշմարիտ կրօնական դպացմունքների մէջ»։ Եղած փորձերը ցոյց են տալիս որ այնքան էլ թանկ չեն նստում աշակերտներին վրայ այդ դրօսանքները։ Այս տարի Վիտերի սեմինարիայի աշակերտները ու Սինօդի թոյլատուութեամբ ճանապարհորդելով Վօլգայի վրայով, Կովկասում և Ղրիմում բաւական երկար ժամանակ իւրաքանչիւրը ծախս ունենում է ընդամենը 20 ռ. Աշակերտներից յետ չեն մնում և աշակերտուհիները։ Կիևի թեմական դպրոցի 25 աշակերտուհիներ իրենց դաստիարակչուհիների հետ նոյն նպատակով ճանապարհորդել է Ռուսաստանի հիւսիսում։ Յուլիսի սկզբներին Կիևի Երկրորդ թեմ. դպր.-ից ելնում են 40 աշակերտուհի և ճանապարհորդում Մոսկուայի, Նորոսիլաւի, Կազանի, Վօրօնէժի և ին նահանգներում։

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Յուլիսի 7-ին (հ. տ.) Հռովմից խփուած մի հեռագիր կաթոլիկ աշխարհին գուժեց Լեոն ԺԳ-րդ պապի մահը։ Այդ օրը կէսօրեց յետոյ ու Պետրոսի յաջորդը ծանր հիւանդութիւնից յետոյ կնքեց իւր երկրաւորը։ Լեոն ԺԳ-րդ խաղաղական մի հարուստ կալուածատիրոջ գաւաի էր. նրա մկրտութեան անունն էր Ժօաքինօ Պէդդի։ Նա ծնուել է Կապրիում մարտի 1-ին 1810 թ.ին։ Նա իր սկզբնական կրթութիւնը ստացաւ Յիսուսեանների դպրոցում, ապա մօր մահուանից յետոյ՝ անցնելով Հռովմ իւր մօրեղբօր մօտ՝ մանում է Հռովմի համալսարանը, որտեղ նա մեծ յաջողութեամբ առաջ տանելով իւր պարտադմունքները, 1834 թուին արժանանում է աստուածաբանութեան դօկտօրի ցիւանական ատիւնանին։ 1837 թուին ձեռնագրութեամբ է քահանայ և անմիջապէս կարգուում է վատիկանի մէջ պաշտօնի։ Այնուհետև նշանակուում է Բրիւսելում պապական նուիրակ. որ վաւրեց մինչև 1846 թիւը։ Ապա նոյն թուին նշանակուում է Պէրուզէի թեմի արքեպիսկոպոս, այս պաշտօնի մէջ նա մնաց մինչև պապական աթոռ Բարձրանալը։ Նա իբրև Պէրուզէի թեմի արքեպիսկոպոս, իւր արթուն և խոհուն կառավարչութեան շնորհիւ մեծ հեղինակութիւն և համակրութիւն վաստակեց։